ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԷՍ

Տարեկան հանդէս տօնի Սրբոց Թարգմանչացն մերոց :

Ո՛ՆՉ սրտաշարժ տեսարաններ և ինչպիսի՜ ըղձալետ ասպարէզներ չեն բանար տարածեր մէկ ճշմարիտ ազգասէր սրտի մը աչքին առջև այսպիսի գերահրաշ Սրբոց տօնախմբութեան հանդէսները : Անձկանօք անուննին հնչելու ատեն՝ երբոր նորոգուին իր մտացը մէջ անոնց անմահական յիշատակաց արժանի արդիւնքն , վարքերնին կարդալու ատեն՝ երբոր աչքին առջև նկարուին անոնց իր ազգին վրայ թափած քրտինքներն , զանոնք յիշելու ատեն՝ երբոր մէկէն դիմացը բացուի Հայաստան աշխարհն ալ , որ իր երջանկութեան դարուն մէջ զուարթ կը խնդայ , երբոր կ՚ըսեմ , ազգասէր անձ մը աս ամէն անձկալի յիշատակներուն մէջ ընկղմի այսպիսի Սրբոց տօնախմբութեան օր մը՝ ի՜նչպէս կրնայ լռել , ի՜նչպէս իր հայրասէր սիրտը անմռունչ կենալ . հարկաւ կը թռչի այնպիսին մտքովը իր քաղցր հայրենեաց սահմաններն՝ ծարաւած և պապակած սիրտն ու հոգին բովանդակ յագեցընելու ըղձիւք . կը վազէ ազգին նահատակաց դամբաններուն քով՝ յորդահոս արտասուօքը համբուրել զանոնք՝ 'ի նշան երախտապարտ զգացմանց սրտին . իր քաղցր հայրենեաց աստղերուն տակ մտքովը թռչելով՝ իր Հարցը իր Նահատակացը տեսարաններուն մէջ կը վազէ թաղել անհետացընել իր սրտին դառնութեան և տրտմութեան մտածմունքներն , որոնք կրնան տիրած ըլլալ ազգասէր սրտի մը մէջ՝ այնպիսի երջանկութեան դարէ մը զրկուած մնացած ժամանակ մը :

Ահա այսպիսի մտածմունքներով լեցուած մեր Միաբանութեան անձինքն և աշակերտներն ալ , և մի և նոյն ճշմարիտ ազգասիրութեան մը փափաքանօք , ինչպէս ուրիշ տարիներ [1] , նմանապէս աս տարի ալ Սրբոց Թարգմանչաց մեր երանելի և արդիւնաշատ Հարց տօնախմբութեան օրը՝ աստուածային պաշտաման պարտուպատշաճ հանդէսներէն ետքը , փութացին Սրբոց Թարգմանչաց գեղեցիկ յիշատակը և անոնց անմոռաց արդիւնքն՝ ներբողեան գովասանական ճառով մը և այլ սրտառուչ ոտանաւոր իմաստներով՝ նորոգել կրկին անգամ իրենց սրտին մէջ . և 'ի նոյն մեր ազգային եղբարքն ալ յորդորելու փափաքանօք միայն՝ նոյն ներբողեանը ահաւասիկ տպագրութեամբ ալ կը հրատարակենք , որն որ Միաբանութեան կրտսերագոյն աշակերտաց յառաջադէմներէն մէկն խօսեցաւ :

ՆԵՐԲՈՂ

Ի ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՍ

Տուր ինձ զքոյոց աթոռոցդ զդարանակալ իմաստութիւն .

ԻՄԱՍՏ .

ՅԱՍՏՈՒԱԾԱԳԻՏԻՒ հօրէդ և 'ի պատուական ակմբելոյդ առեալ համարձակութիւն , աստէն 'ի հանդիսի հրապարակիս չէն ինձ կամք ճառ արկեալ խօսել զարանցն այնոցիկ մահկանացուաց , որոց երկրաւոր իմաստութեան ելեալ 'ի խնդիր , 'ի նա միայն զիղձս հաստատեալ , 'ի դրունս նորա սպառեալ մաշեցին զաւուրս կենաց իւրեանց , և յօրհասին մերձենալ իբրև զտերև հողմավար , այնպէս և նոքա դեգերեալ խորհրդովք և ըղձիցն ապաժամանն , թողին զաշխարհ , զհանդիսարանն զընդունայնութեան վաստակոցն իւրեանց և ըղջանից : Այլ արժան է ինձ աստէն յառաջինեաց ակմբիս , հակիրճ խօսել զնոցանէ՝ որք թէպէտ մահկանացու վիճակեալ բաղդի՝ յանմահութիւն թևակոխեցին յասպարիզի անդ ծովածուփ կենցաղոյս , զհրաշակերտն զայն և զերկնային իմաստութիւնն կալեալ անձանց առաջնորդ , զոր խնդրեաց երբեմն և յԱստուծոյ իմաստնացեալն ընտրելոյ ազգին դատաւոր , զդարանակալն աստուածեղէն աթոռոյ , զայն իմաստութիւն՝ որով որք վարեցանն առ բարձրեալն զբարեկամութիւն առաքեցին , և ընթացից գործապարացն զնա վերելս առեալ՝ եր-

1 Տես Բազմավէպ հտ . Բ . երես 271 :

կրաւորօք երկնաւորին եղեն ժառանգ, անցաւոր ունայնութեամբ զանանցական բարեացն տոհմականս չաեմարանեցին. և եթէ բանիս կամք էն առնել, գարանակալ անմահին եղեն աթոռոց՝ յաւիտենականին փառօքն զմահկանացուն իւրեանց գեղազարդել մարմին, և լուսով նորա զանգիտութեան 'ի բաց թօթափեալ զխաւար: Եւ արդ զո՞ արդեօք 'ի մահկանացուաց անտի ածից այսր 'ի հանդէս պատկառելի ակմբիս, բայց եթէ... ո՛հ և վաղվաղակի մտացս իմ աչք սլանան 'ի նուիրականն և 'ի տարփալին ինձ գաւառ, ուր հանգչին ոսկերք հարցն իմոց վեհազանց, և ահա նկատեմ զՍահակ և զՄեսրովպ լցեալս երկնային իմաստութեամբ, և սքանչելի պարգևօքն ճոխացեալք, որոց մատակարար և բաշխիչ է նա ինքն բարձրեալն: Արդ ուրեմն թոյլ տուք ինձ, Տեարք իմ պատուականք, թոյլ տուք ինձ յառաւելութէ սիրոյս առ նոսա բանս ինչ բարբառել գովութեանց, թէպէտ և համօրէն իսկ երկրաւորացն շրթանց ներբողենի, թող թէ իմոցս, անկարօտս զնոսա գիտեմ. զի սոքա արդարև վաճառականք վեհագոյնք որք զարգասիս իմաստից 'ի տաճարէ անտի բարձեալ իմաստութեան, և ածեալ բերին յաշխարհ Հայաստան, և այլով իմն կերպարանաւ զնա պճնեցին. սոքա եղեն վարժապետք վեհագոյնք, որովք զգեցաւ Հայաստան զհանդերձ գիտութե և հանճարոյ, պետք և առաջնորդք Հայկեան դպրութեան և ճառագայթ աստուածապարգև լուսոյն, որք փարատեալ 'ի բաց վանեցին 'ի մէնջ զաղջամուղջ և զթանձրամած խաւար տգիտութեան: Հա՛պա, որք 'ի խրախոյս և 'ի քաջալեր աղկաղկ հասակիս յօժար սրտիւ 'ի սերկեանս աւուր այսր խմբեալք կայք, շնորհեցէք ինձ գամ մի զձերդ ներողամիտ ունկնդրութիւն:

Գերագոյն քան զամենայն պարգևս արարածականի բնութեանս պատշաճական զհանճարոյն համարել արժան է զձօն, որով զօրութիւնս մեր աստուածեղէն իւրոյ բնութեան հաղորդակից կարգէր՝ որ զանկերպարանն 'ի ձեռս առեալ ըղձհող՝ շունչ 'ի նա ազդէր վեհապետական, և 'ի չընչոյ անտի երկրորդ ումն աստուած 'ի մէջ արձանանայր տէր և իշխան արարածոց, և միայն նմա 'ի հարկի կացեալ որ զնա յոչէութենէ 'ի կերպարանս և 'ի լինելութիւն առեալ ածէր: Հանճարոյն արգասիք էին և իմաստութիւն, վեհագոյնն այն առաջնորդ մարդկութեան և մեծարոյ յաչս ամենայն ազգաց, որք թէպէտ 'ի խաւարի գանդաչելով մոռացան զԱստուած, և արարածոց գործոց ձեռաց իւրեանց պաշտօն հարկանէին, այլ պատուական միշտ զպարգևս զայս իմաստութեան համարեցան, մինչև բազմաց 'ի նոցանէ մոգաբերութեամբ մերկանալ յամենայն աշխարհային բարեաց, թողուլ զփառս և զպատիւ, իմաստից և իմաստասիրի անուանն լոկոյ ցանկանալով. վասն որոյ թէպէտ և թափուր 'ի կարգաց բարեպաշտութեան, այլ ոչ ամենևին անհետացեալ բառնային 'ի նոցանէ օրէնք քաղաքականք, և վարչութիւնք աշխարհականք. մանաւանդ թէ որ առաւել իմն փութով գայր զնովաւ, նա լինէր օրինադիր և հրամանահան այլոց: Եւ եթէ երկրաւորս այս այսչափ մեծարոյ յաչս մարդկան լինէր իմաստութիւն. քանիօն առաւել երկնաւորն, զորոյ աւա՜ղ ոչ ծանեան նոքա զարժանիս, և զմեծութեան նորա տգիտացան առնուլ զչափ. ոչ կարելով ամենևին կալ 'ի վերայ՝ զի եթէ աստուածայինն՝ մարդկեղէն իմաստութեան չիցէ սատար, կորուստ անհնարին և մահ անհրաժեշտ կայ մնայ նմա: Արդ ուրեմն իմաստունք գործեցին որք զճշմարիտն իմաստութեն կալան անձանց առաջնորդ, իմաստունք գործեցին՝ որոց արարք՝ երկրաւորք իմն թուին յաչս մարդկան, այլ նպատակ և կնիք գործոցն երկինք են և անմահութիւն. իմաստունք գործեցին, ո՛հ, իմաստնագոյն ես գործեցին Հարք հայրենեաց մերոց Սահակ և Մեսրովպ, որք նախ զանձինս և ապա զբազումս 'ի մարդկանէ յաստուածազարդ իմաստութեանն ածին 'ի տաճար ցանկալի. քանզի որ միանգամ տեղեկագոյն քննութեամբ և ճշմարիտ խելամտութեամբ զջանից նոցա և զվաստակոց ըղձչափ առեալ իցէ, իրաւամբք զնոցանէ՝ զմեծի առն, և յարգասիս քրտանց նոցա վայելողի, զՄովսիսի Խորենեցւոյ, ճշգրտեալ զբանս տեսանիցէ, եթէ "Մահկանացու ծնեալ և անմահական թողին յիշատակ„: Սահակ ծնունդ Պարթևազեան, գիտազանցն հնոց զաւակ արժանաւոր և պայազատ արեանն Գրիգորի, յանտիական տիոյն երևեցուցանէր յանձին զարգասիս ամենախնամ պարգևաց բարձրելոյն. մանուկ մտավարժ յորժամ սիրոյն աչօք 'ի հայրենականն ակնարկէր երկիր, խրախանայր հոգւով մինչդեռ զնախնոյն իւրոյ զմեծին Գրիգորի ոչ յումպէտս ինչ և անվաստակ զքրտունսն տեսանէր հեղեալս, այլ և միանգամայն արտաքնեկեալ վշտանայր՝ գիտելով չափ եթէ տգիտութիւն դարանակալ է հաւատոյ և եղծիչ կարգացն բարեպաշտութեան: Նոյն իղձք և նմանօրինակ ցաւք վշտաց էին և երանելւոյ առնն Մեսրովպայ. զխնդութեան և զարտմալիր ցաւոց միանգամայն յաչացն զարտասուս հեղլով: Որպէս ոք զի ըմբշամարտ հանդերձեալ իցէ ելանել ախոյեան՝ մինչ չև յասպարէզն մուտ գտեալ՝ մտադիւրութեամբ ճգնիցի վարժել զանձն 'ի հրահանգս քաջութեան, զի մի փոխանակ պսակացն զամօթ ժառանգեսցէ, այսպէս և երանելիքն Սահակ և Մեսրովպ՝ մինչ չև ձեռնամուխ 'ի գործն լեալ՝ զինուորգու զանձինս կազմէին. զօրականք վեհագոյնք, քաջալերս միմեանց կարգացեալ և մտանէին կամակար յասպարէզ քրտանց և վաստակոց, զինեցան արութեամբ սրտի, և գիմագրաւ յանձն առին մարտընչել ընդդէմ զինուոց ծանրաբեռն վաստակոց և բազդին, թիկունս անձանց զԱստուած կարգալով 'ի բարձանց: Օրհնեա՜լ էին քրտունք ձեր, և երանեա՜լ գործք ձեռաց ձերոց. Ջանիցդ ձերոց և

վաստակոց հանդիսադիր 'ի մէջ անցեալ կան երկինք և երկիր, և ժողովուրդ այդ զոր տեսանէք, և զորոյ զբաղդն արտասուէք՝ 'ի ձէնջ զմտացն իւրոց զպայծառութիւն ընկալցի: Քանզի թէպէտ 'ի շինութեան էր աշխարհն մեր հայրենի, յանդորրու թագաւորութիւնն, այլ աւաղ, զի աղջամուղջն այն խաւարի տգիտութեան և անիմաստութեան շուրջ եկեալ՝ պատեալ պաշարեալ էր ըզնա. և քանզի տգիտութեան այս արգասիք են, զի ուրեք մուտ գործեալ՝ ընդ իւր և այլս 'ի ներքս սպրդեցուցանէ ապականագործ թշնամիս ուղղութեան հաւատոց և բարեպաշտութեան կարգաց, վասն որոյ և Հայաստանեայց աշխարհ չէր զերծ 'ի կաշկանդիչ շղթայից, որպէս պատմութեանց մերոց երաշխաւորեն մեզ մատեանք. քանզի աստի տգիտութեանն զնա խաւար պաշարեալ՝ այր զարամբ ելանէին և խառնս աճագինս յարուցանէին. անտի Պարսիկն խրոխտ սպառնայր խորտակել զգաւազանն արքունի, և յաւեր զերկիրս դարձուցանել, 'ի սուր սուսերի մաշել զամենեսեան. և շաւիղն ահաւոր մարտին յահ և յերկիւղ զամենեսեան ըմբռնէր, քանզի և տակաւ բռնաւոր ձեռն պարսկական ծանրանայր 'ի վերայ աշխարհիս: Ազխոիցն այն տեսիլ ահաւոր 'ի մեծ տագնապս և 'ի վարանս տարակուսանաց զերանելեան արկանէր զՍահակ և զՄեսրովպ. զի մինչդեռ նոքա իմաստուն բարեկարգութեամբ կերպարանափոխ զաշխարհն առնել ջանային, խառն մարտամբքս պատերազմաց՝ յիւրեանց ջանիցն զնոսա կասեցուցանէին. վասն որոյ և յարքունականացն մտադիւր մերկանային 'ի փառաց և 'ի պատուոյ, և զբարեկամացն և զընտանեաց զգգուանս արհամարհեալ՝ թողուին և զհայրենիս, ուր շնչեցին զշունչ կենդանութեան, պանդխտել 'ի վայրս ամայիս, և զամենակարող ձեռինն օգնականութիւն կոչեալ անձանց առաջնորդ, գիտել երթալ ուր կամք նորա և հրամանք առաջնորդեալ ածիցեն: Քանզի Սահակ թէպէտ և հայր որդւոց և ընտանեաց, մտերիմք նորա և բարեկամք բազումք, մոռացաւ զամենեսին, աճապարեալ խոյս ետ և մտադիւր յանապատս և 'ի քարայրս դադարէր: Մեսրովպ որ հանապազ առաջի թագաւորաց ելանէր և խօսակից ընդ նոսա լինէր, և արքայական պատուով մեծարանս 'ի քաղաքացեացն ընդունէր, ատեաց անձն նորա զամենայն փառս աշխարհի, և ընթանայր յանապատս անմարդիս. և այսպէս ամոլքն երկոքին Սահակ և Մեսրովպ դասս աշակերտաց գումարեալ, հանապազ խարազնազգեցք, երկաթապատք և բոկագնաց լինէին, զտիւ և զգիշեր աղօթիւք հանէին 'ի գլուխ:

Ետես բարձրեալն և լսելի եղեն նմա մշտնջենամռունչ հայցուածք երանելեացն, որովք զաշխարհիս զպայծառութիւն հանապազ տենչանօք խնդրէին 'ի տեառնէ. ակնարկեաց միանգամ գթալիր աչօքն 'ի Հայաստան, և բարկութիւն նորա զիջաւ 'ի հաշտութիւն. կոչեաց զՍահակ, և նմա յանձն արար զհօտ և զխնամս աշխարհին, զնա ընտրեաց առաջնորդ ժողովրդեանս, որպէս երբեմն Խորայելեան բանակին զՄովսէս. և զոր օրինակ նմա զԱհարոն, նոյնպէս և զՄեսրովպ Սահակայ ցուցանէր ձեռնտու, հանել կամելով զնոյն Խորայէլ՝ ըզտունն Թորգոմայ յեգիպտական խաւար տգիտութենէ: Ոչ ինչ ընդդէմ դառնայր աստուածեղէն հրամանաց Սահակ. էջ յանապատէն, և եկն յերկիր հայրենի 'ի Հայաստան աշխարհ, և տեսանէր անդ խաղաղութիւն համատարած. քանզի գաւազանն արքունի վերստին կանգնեալ, ապիրատն Խոսրով մերժեալ յարքունական գահոյիցն և 'ի փառաց, և Վռամշապուհ բարեացապարտ և խաղաղասէր թագաւորն բազմեալ յաթոռ իշխանութեան. նա 'ի թագաւորական, և Սահակ 'ի հայրապետականն բազմէր աթոռ, յաթոռն զոր ստացաւ Գրիգորիոս պարգև Աստուծոյ և Հայաստանեայց՝ բազմապատիկ վաստակօք, և արեամբ չափ ընդ նենգաւոր անօրէնութեան պատերազմելով. յաթոռն՝ զոր Վրթանայ և Յուսկեայ ներկեցին արգասաբեր արիւնք, և որ զՄեծին Ներսիսի ոչ զքրտունս միայն՝ այլ և զշունչն յափշտակէր բարերար: Եւ այնուհետև էր տեսանել զՍահակ Հայր Հայաստանեայց, պատկեր և նկարագիր առաքինութեան և կանոն ուղղութեան, հրահանգիչ աշխարհի մանկտւոյն 'ի հաւատս ճշմարիտ կրօնից և վարժապետ գիտութեան: Ցապուշ հարեալ ընդարմանայր և ինքն Հայաստան ընդ ջանս, ընդ փոյթ և ընդ վաստակս նորա. յակճիռս լեալ հիանայր և Պարսիկն. պատուեաց զնա գրով առաջի արքային, յիշեաց զերախտիս նորա և շնորհապարտ գտաւ նմա, և ահա Հայաստան բանայր ըզդուռն իմաստութեան և ընծայութիւն պատկառանաց մատուցանէր նմա:

Զայն իբրև երանելին լսէր Մեսրովպ, որ յանապատին գումար աշակերտաց արարեալ ուսուցանէր, բերկրեցաւ խնդութեամբ, զուարթացաւ յանձն իւր, տարադէմ էջ 'ի հայրենիս, և զաշխարհս 'ի վայելս բարութեան տեսեալ՝ վաղվաղակի ընթանայր առ երանելին Սահակ, արտասուք յաչս՝ այնպէս զնմանէ գոհանայր, զաշխարհն բովանդակ կերպարանափոխ տեսանելով: Այլ զինչ իցէ զի 'ի համաշխարհի խաղաղութեան յարտասուս զաչս ձեր և 'ի վարանս տագնապողկանս զճակատ տեսանիցեմ. զինչ իրք իցեն որ 'ի տխրութիւն զձեզ արկանիցեն, զի ահա աշխարհս խաղաղութեամբ պանծացեալ և յանդորրու բարօրութեան, և զինչ պակաս 'ի խնամոցն արար տէր յիւրականն աշխարհ Հայաստանեայց: Ա՜հ, և յիրաւի էին արտասուք նոցա, զի ոչ զայսպիսի զվաղանցուկ խաղաղութեանն վայելս խնդրէին նոքա Հայաստանեայց. քանզի և մարթ իսկ էր դարանակալ մահուն զբարերարացն բարձեալ զարև՝ միանգամ յաղջամուղջ խաւար տգիտութեան արկանել զաշխարհն. մարթ էր դառնագոյն ևս պատերազմ տգիտութեան տուեալ և անիմաստու-

թեան, զսակաւօրեայ վայելչն քաղցրութիւն 'ի գառնութիւն յեղանակել: Քանզի և անմոռաց յուշի ունէր Սահակ զահաւոր երազոյն տեսիլ, զորոյ զառագաստ թագնութեան մերկանոյ առաջի աչաց նորա հրեշտակն Աստուծոյ 'ի Վաղարշապատ, աստուածապատգամ բարբառմն նախաձայն ազդեալ նմա զթագաւորութեան և զքահանայական աթոռոցն միանգամայն կործան յերկիր անկանել. վասն որոյ և ըղձալի էր նոցա 'ի վերայ աստուածապաշտ անդրդուելի կարգացն կայկայել զտունն Հայկայ, զի մի 'ի հողմոցն չարութեան և ազխտութեան տագնապեսցի:

Եւ ո՞ ոչ գիտիցէ զի տանս Թորգոմայ յայնմ ժամանակի չէին հայրենի նշանագիրք, և պէտք լինէին նմա օտարոտի նշանագրովք պարսկականաւն և ասորականաւ վարել հանապազ, որ հեռի է ամենևին յիրաւանց Ճշմարտութեան, և անպատշաճ և խոչընդոտ մեծ' գալրութեանցն բարգաւաճելոյ: Այպա ուրեմն ոչ 'ի զուր արտասուեաց Մեսրովպ' և ոչ 'ի նանիր հալեալ մաշեցաւ սիրտ նորա, 'ի տեսանելն զաշխարհս զիրկ 'ի բնիկ նշանագրաց: Որպիսի՛ տագնապաւ աղեկէզ ցաւոց ոչ պաշարէին զսիրան հայրենասէր, յորժամ տեսանէր զամենեսեան 'ի տաճարին Աստուծոյ գումարեալ, և նոքա որ 'ի Հայաստան ծնեալ և սնեալ, որդիք Հայկայ' Ասորւոց խաղտալեալ և հելլենական ծեքարանութեամբ զԱստուած ձայնէին, և զպրքախոս տառան 'ի ձեռան առեալ յԱսորականէն յեղուին 'ի Հայ 'ի լսելիս ժողովրդեանն. ո՜հ գառն էր այս յաչս երանելւոյն, հոգացեալ տարաժամ արամէր, տեսանելով զմանկանցն աշխարհին զառապանս, ուք մաշէին զաւուրս կենաց իւրեանց 'ի դպրոցս աստարի գիտութեանց: Այնուհետև խորհուրդք խորհրդոց կալան զմիտս նորա, և վարանք տարակուսանաց կաշկանդեցին զնա, սէր Աստուծոյ և ազգին 'ի նորօրինակ քիրան և 'ի վասոտակ յորդորմամբ զնա առնէին. վասն որոյ և հաստատութեամբ գընէր 'ի մտի հայկական նշանագրացն գիւտ ելանել 'ի խնդիր, ո՜հ, 'ի գործ տաժանակիր, բայց զմո՞րդ իշխիցեմ տաժանակիր և դժուարին զգործն ասել. յորժամ զամենահնար ձեռինն Աստուծոյ տեսանիցեմ կարկառեալ զաջ օգնականութեան: Գայր ապա առ Սահակ փութապէս, և մերկանայր նմա զառագաստ խորհրդոց սրտին, բանայր նմա առաջի զայն ամենայն' որոյ վասն սիրտ նորա աղեկէզ տագնապէր. համամիտ զնա և արտասուակցորդ և ջանիցն իւրոց տեսանէր սաստար. այլ 'ի զուր առ Վռամշապուհ դիմեալ երթային, 'ի զուր զՎահրիճ զմեծ իշխան քաղաքէ 'ի քաղաք թափառեցուցանէին, 'ի զուր Դանիէլի ասորւոյ զհետ երթային, և 'ի Պղատոնէ գիւտս նշանագրաց խնդրէին: Աստուծոյ միայնոյ էր տալ զայն պարգև զգերաշխարհիկն և զարդարև երկնաւոր. վասն որոյ և ինքեանք յուսահատ 'ի մարդկեղէն ջանից' սիրալիր հայցուածովք զերկնաւոր գթութեանն պաղատէին խնամս: Այպա այնուհետև ոչ քրտունս արեան հոսեցին, և 'ի տագնապս և 'ի վարանս տարակուսանաց ոչ ըմբռնեցան, ոչ մերթ յայս և մերթ յայն գիւան ընթացան, քանզի յամենահնար ձեռին ապաստան եղեն Ճարտարութիւն. ինքն ամենակալն յերկնաւոր ամպոց զաստուածագիծ տառիցն պարգևէր շնորհս 'ի լեռան Բալուայ որպէս երբեմն Մովսեսի 'ի Սինա: Ո՜վ զարմանալեացս. հիանամ միտք իմ ընդ նորահրաշ պատահումնս, և բաղդի աշխարհիս արտասուօք տամ երանի: Բա՛րէ, զինչ է զոր տեսանեն աչք իմ. լաւ երկիր, ոչ ևս արտասուօք ձայնք լսին յերկնից. և նորա այս Մովսէս ելանէ 'ի լեռան ընդունել զպատգամս բարձրելոյն. ահա ամպ մեգամած պատէ զերկինս, փայլատակեն եթերք. տեսարա՛ն ահաւոր. և անդ Մեսրովպ 'ի ծունր իջեալ հառաչանս աղօթից 'ի վեր առաքէ, և ահա վէմ և թաթ աջոյ որ կնքեալ դրոշմէր զտառսն 'ի վիմի. և ահա ամպն պարզի, դադարին փայլատակունք' և անդ Մեսրովպ միայն, որոյ առեալ զաստուածագիծ տառսն և խնդութեամբ իջանէ 'ի լեռնէն: Խնդացէք այսուհետև որդիք արամեան, ուրախ լերուք, զի ոչ ևս պարսկական և ասորական օտարոտի լեզուք տիրեսցեն 'ի վերայ ձեր, և 'ի վերայ արքունական գաւազանին. մի ևս այլ Մեսրովպ ելանիցէ 'ի բեմբ և այլալեզու գրոց լսցի ձեզ թարգման, ո՛չ ևս Աստուած' յօտար լեզուաց եկեղեցիս ձեր փառաւորեսցի, մի այլ պանծասցին Պարսիկն, Ասորին և Հելլէն սիգալով 'ի վերայ ձեր. ո՜ն անդր 'ի բաց լեր ո՜վ անարգ ազխտութիւն, երթ 'ի բաց զի թագաւորեսցէ 'ի մեզ հանճար և իմաստութիւն աստուածազարդ փառօք բարգաւաճեալ:

Ո՜ տայր ինձ լեզու' զհայաստանեայցն սրտից ցնծութիւն 'ի դէմս ածել: Ո՜ն խնդութեամբ ողջունէր զՍահակ և զՄեսրովպ. ո՜ն զպարսկական տառից զմագաղաթեայս ծուէնս ծուէնս արարեալ' ընդ օդս հանէր, գոչելով. գնա՛ 'ի բաց, չեն ինձ պէտք այսուհետև կարօտանալ ձեզ մինչդեռ կենդանի են հայրենի տառքն մեր. այլ ո՜ն զնշանագիրսն 'ի ձեռն առեալ համբուրէր, և զաստուածականն առ սոն հարեալ ընդունէր: Եւ զի՞ մի մի թուիցեմ. աշխարհն ամենայն տօն ցնծութեան և հանդէս բերկրանաց յօրինէր: — Սկսան այնուհետև յաշխարհին վարժարանաց 'ի դպրութի հայ գիտութեան յաճախութիւնք, անդ վարժէին քաջուշիմ և մտավարժ մանկունքն աշխարհին, և վաստակք և արգասիք քրտանց երանելեացն պայծառ փայլեցան 'ի նոսա. ամենեքեան 'ի թարգմանութիւնս գրոց պարապէին. ոմանք առաքեցան յԵղլադա, 'ի Բիւզանդիոն և ոմանք յԱղեքսանդրիա, զկարևորագոյն մատենիցն զթարգմանութիւն ածել բերել 'ի Հայաստան:

Տարադէմ Ճանապարհ արարեալ հասին ուր ուրեմն 'ի քաղաքն ուր դէմ եդեալ էր նոցա գնալ. և անդ զուսումնական հրահանգացն զընթացսն կատարեալ, դարձ 'ի հայրենի աշխարհն առնէին

խնդութեամբ, իբրև զգործաւէր մեղուս զարդիւնս իմաստից բարձեալ բերելով 'ի Հայաստան :

Այլ մի՛ սիրտ ասէն կարեմէր հարեալ և ոչ յարտասուս լուծանիցի, յորժամ զաղէտս տարակուսանաց երանելեացն լսիցէ, յոր անկան նոքա մինչդեռ խնդութեամբ 'ի Հայոց աշխարհն դառնային : Զիա՞րդ տագնապէին սիրտք նոցա, յորժամ զաճիւնս միայն վարդապետացն տեսին, յորժամ լուան զի կալաւեաց յարևէ անագորոյնն մահ զՎռամշապուհ, զՍահակ և զՄեսրովպ, յորժամ զորս ողջունել ցանկային՝ զահաւոր դամբանս նոցա միայն տեսանէին :

Բայց իմ առ ձեզ, ո՛վ Հարք հայրենեաց, արտասուալից դարձցի բան, որ մնայցս աչօք տեսի զձեզ տարադէմ բերկրալիցս 'ի հայրենեաց, և արդ թուիմ տեսանել. . . ո՛վ բաղդ աննուէր, որ ոչ խնայեաց 'ի ձեզ և ոչ 'ի Հայաստան յեկեղեցի և յաշխարհ. և այդպէս անագորոյնութեամբ փոխանակ զպատուական և զարգասաւոր արտասուս յաչացդ ընջելոյ, 'ի դառնադոյն երաշխէպս ցաւոց արկանէ զձեզ : Արդ թուիմ տեսանել զձեզ հուպ առ գերեզմանն երթեալ վարդապետացդ կենդանի բարբառովդ և հեկեկալիր արտասուօք զոսկերս նոցա համբուրելով զզիա՞րդն հարցանել կերպարանափոխութեան աշխարհիս. գիտել, իմանալ զպատճառս կործան անկանելոյ Արշակունեացն իշխանութեան և աթոռոյ մեծին Վռամշապհոյ . . . Այլ մի՛ աղաչեմ զձեզ, մի՛ զիրդ 'ի յուշ ածիցէք, զի մի՛ ոսկերքն խաղաղաւէտք յալուց երկրի տացեն զարձագանգս արտասուացն՝ որովք 'ի կենդանութեան լացին զերկիրն հայրենի. մի՛ դուցէ միւսանգամ ծերունազարդն այն պատուական գլուխ՝ յարտասուս յորդորիցի, որովք ոչ կարաց ամոքել զխստութիւն սրտի տիրադրուժ նախարարացն, որք ոչ միայն զԱրտաշիր 'ի գահոյիցն արկանէին, այլ և բարերարին հայրենեաց տուն խաւարին բանտի պատրաստէին. և որոց յիշատակն միայն ցաւոց՝ զամոլակցին նորա զՄեսրովպայ կարճէր զաւուրս : Զշիրիմդ զայդ զոր տեսանէք, զգերեզմանդ զոր համբուրէք, ա՛հ, երախտամոռաց բարք ձերոց հայրենակցացն նոցա նիւթեցին, և փոխանակ քրտանցն և ջանից զայս պատրաստեցին պարգևս վշտաց : Հա՛պա և՛ դուք ողջոյն մի սիրակաթ արտասուացող աչօք տուեալ շիրմացդ և աշխարհիդ, թօթափեցէք զփոշին յոտից յաշխարհ անդր, և միւսանգամ տարադէմ մեկնեցարուք 'ի վայրան, ուր ոչ հեկեկանք, այլ փառք պարծանաց մնան ձեզ : Այլ բաւէ, զինչ ասեմ. զիա՞րդ դժպհիս յականջս նոցա բարբառիմ. նոքա հարք են հայրենեաց, դայեակք իմաստից. որդիքն թէ սարտուցեալ առ 'ի նոցանէ փախչիցին՝ խնամով երթան զհետ նոցա, գիրկս զնոքօք արկանեն, լան և վատակեն միանգամայն, հառաչեն՝ և վան ազգին ընդ քիրան գան և ընդ ապաժոյժ : Քանզի յԱստուծոյ խրախուսեալք, և մարդոյ փոխարինացն չեն արժանաւորք. նա միայն տագնապողական ազնուց որոց նոցա լինէր մխիթար և սփոփանք, նովաւ խրախուսեցան, նովաւ սրտապնդեալ՝ և զօրացան քաջապէս, և պնդեցին զանձինս արութեամբ : Այո՛ թէպէտ մթագնեցան արեգակունքն լուսափայլք և մուխն 'ի ծոց երկրի, այլ ոչ ամենևին աշխարհն խաւարեցաւ, զի աստեղքն այնոքիկ լուսափայլք՝ դարձեալ լուսաւորեցին ըզՀայաստան. աստեղք արդարև լուսալիրք և պայծառ ճառագայթք իմաստութեան արփենւոյն, Մովսէս, Մամբրէ, Անյաղթն Դաւիթ, Եզնիկ, Գիւտ, Յովհան, Եղիշէ, Ղազար և նմանիք սոցա, որ Հայաստանեայց աշխարհի փառացն և պարծանաց լինէին պատճառք : Այս բոց և այս հուր անշէջ՝ ոչ միայն 'ի սիրտս նոցա, այլ և 'ի սիրտս պայազատաց սերնդոց նոցա վառեցաւ, այլ վառեցաւ և 'ի սիրտ Մխիթարայ անմահ բարերարին մերոյ, վառի արդ անշէջ և 'ի սիրտ նորոյս Մխիթարայ վսեմական Աստուածապատիւ Հօրս մերոյ, որ դահագլուխ բազմեալ կայ պատկառելի ակմբիս 'ի խրախոյս և 'ի քաջալերս մեզ. բորբոքի դարձեալ 'ի սիրտս Վարդապետացդ, ո՛ առաքինիք, զորս տեսանէք ժողովեալս աստանօր 'ի խրախոյս տկարութեան մերոցս ջանից. որոց զոգի 'ի բուին կալեալ և ջանիցն ուրեանց և վաստակոց առաջնորդ զերջանիկ գումար սրբոց Թարգմանչաց, խրախուսեն 'ի վաստակս վասն մեր և վասն հայրենեաց : Եւ արդ, Եղբարք, այդպիսեաց Հարց անարժանք երեւեցուք որդիք. ո՞ն անդր. համպա ուրեմն և մեք զնոյն ոգի, զնոյն սէր ջանասցուք վառել 'ի տկար լանջս մեր, բաբախեսցին և սիրտք անշէջ սիրովն հայրենեաց, և օրինակ մեզ զՀարսն մեր առեալ՝ մտցուք քաջապէս զինուորեալ ընդ խաչանիշ դրօշու երանաշնորհ Թարգմանչաց. նոքա լիցին առաջնորդք մեր և վարժապետք : Վաստակք մի՛ իւիք վհատեցուսցեն զմեզ, այլ զօրասցին բազուկք մեր պնդեալ միով ոգւով և միով արութեամբ սրտի, մի լիցի մեզ մոռանալ իսպառ զի օգուտ և փառք հայրենեաց զնոյն պատուիրեն մեզ անհրաժեշտ. լուիցուք ձայնի Մխիթարայ, և ընդ երջանիկ Վարդապետացն մերոց, եթէ և մեք յերկնաւուր խաղաղութեանն վայելել կամիցիմք յարգասիս՝ գոչեսցուք արտալիր և յԱստուծոյ պաղատեսցուք տալ զլուրոց աթոռոյ զդարանակալ իմաստութիւնն :

ՍԱՄ. ԳԱՆԹ.